Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Երևանի Հ.Իսակովի անվան թիվ 132 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց եկեղեցու պատմություն

Թեմա՝ «Հոգևոր կրթության դերն ուսումնադաստիարակչական գործընթացում»

Վերապատրաստող, մենթոր՝ Լիլիթ Գրիգորյան

Ուսուցիչ՝ Ռոզա Միհրանյան

Երևան 2022

**Բովանդակություն**

Ներածություն ……..…….……..... 3

**Գլուխ Ա**

Հոգևոր կրթության և դերի արժևորումը բարոյական դաստիարակության տեսանկյունից

**Գլուխ Բ**

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան հոգևոր կրթության համատեքստում ….. 10

**Գլուխ Գ**

«Հայոց եկեղեցու պատմությունը»՝ որպես ինքնուրույն և չտարրալուծվող առարկա ….14

Եզրակացություն ……..…….……. 18

Գրականության ցանկ ……..…….……..…….. 20

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** Բոլոր ժամանակներում հոգևոր դաստիարակության խնդիրը յուրովի ուշադրության է արժանացել փիլիսոփաների, մանկավարժների և հոգեբանների հետազոտություններում: Այսօր դրա նկատմամբ գիտական մոտեցումը կարող է լուծել անձի կրոնական առողջ գիտակցության և կրոնական հանդուրժողականության ձևավորման հիմնախնդիրը՝ հատկապես ուսումնադաստիարակչական գործընթացում: Սակայն այն անհնար է իրականացնել առանց հավատի և կրոնական հոգեբանության օրենքների, սկզբունքների, ինչպես նաև, արժեքային համակարգի վերաբերյալ լուրջ մասնագիտական հետազոտությունների ու ձեռքբերումների դիտարկման:

Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր դաստիարակության և կրթության զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում:

Հայ հասարակությունն օտարամուծությունները սովորաբար ընդունում է իրեն հատուկ՝ «հայկական հյուրընկալությամբ» կամ դրանք պարզապես պարտադրվում են աշխարհի կողմից: Շատ հաճախ դիմակայել նման գայթակղություններին այնքան էլ հեշտ չէ: Հենց այս պարագայում է կարևորվում հոգևոր դաստիարակությունը և կրթությունը: Կրթության բարեփոխումների ներկա փուլում խիստ ժամանակահունչ է կրթադաստիարակչական աշխատանքների բովանդակային վերաիմաստավորումը, և դրա միջոցով՝ դպրոցականների հոգևոր զարգացման և դաստիարակության գործընթացի լիարժեք կազմակերպումը: Հիմնախնդրի վերաբերյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ կա բավականաչափ տեսական հիմք Հայոց եկեղեցու պատմության դասերին դպրոցականների հոգևոր զարգացման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Միևնույն ժամանակ մեր ուսումնասիրությունները և մեր մանկավարժական փորձը ցույց են տալիս, որ այսօր մեր կրթական հաստատություններում՝ հատկապես հանրակրթական դպրոցում, դպրոցականների հոգևոր զարգացումն ու դաստիարակությունը գործնականում անբավարար է իրականացվում: Սակայն, արժևորելով հիմնախնդրի վերաբերյալ եղած հետազոտություններն ու

հայեցակարգային մոտեցումները, պետք է նշել, որ դպրոցականների հոգևոր զարգացման հիմնախնդիրը և՛ հոգեբանամանկավարժական, և՛ մեթոդական տեսանկյունից դեռևս մնում է թերի ուսումնասիրված:

**Հետազոտության նպատակն է՝**

- բացահայտել և հիմնավորել դպրոցականների հոգևոր կրթության դերը ուսումնադաստիարակչական գործընթացում և արդի աշխարհի մարտահրավերների պայմաններում,
- ամբողջացնել հայագիտական առարկաների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները,
- լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել,
- վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները,
- կարևորել առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցներում:

**Հետազորության խնդիրներն են՝**

- Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսումնասիրության հիման վրա բացահայտել սովորողների հոգևոր զարգացման հիմնական ուղղությունները, տեսական և գործնական տեսանկյունները,
- մշակել սովորողների հոգևոր զարգացման մոդելը՝ որպես նրանց իմացական-ճանաչողական, հուզական, հոգևոր պահանջմունքների ձևավորման և գործընթացների իրականացման համալիր,
- կարևորել առարկայի դերը, մշակել և գործնականում կիրառել մեթոդական հանձնարարություններ սովորորդների հոգևոր զարգացման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

## Գլուխ Ա

## Հոգևոր կրթության և դերի արժևորումը բարոյական դաստիարակության տեսանկյունից

*«Ազգային դաստիարակությունը պետք է լուսավորվի եկեղեցով,*
*դպրոցը պետք է լինի եկեղեցու նախադուռը»*

Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխություններն ամենաանմիջական կերպով ազդում են մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա: Ազգային դիմագիծը պահպանելու համար հարկավոր է զգուշորեն մոտենալ հոգևոր ու մշակութային ավանդույթներին, որոնց միջոցով հնարավոր է հասարակության մեջ կայունություն պահպանել և հաջող կերպով դիմակայել ժամանակակից մարտահրավերներին:

Սովորողի հոգևոր դաստիարակությունը միշտ էլ գտնվել և գտնվում է դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ դպրոցական ուսումնառության գործընթացը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտի մոտ եկեղեցու հանդեպ պատկերա-ցումներ և սեր արմատավորելու, ազգային ինքնագիտակցություն ձևավորելու, քրիստոնյա դաստիարակելու գործում: Հանրակրթական պետական չափորոշիչով պայմանավորված՝ հստակ պահանջներ են ներկայացված սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար, որի բաղկացուցիչ մասն են կազմում աշակերտների դաստիարակության, ազգային հոգևոր արժեքների գնահատման սկզբունքները:

«Քանի որ դաստիարակության ազգային իդեալը, ազգի գոյության պահպանումն է, զարգացումն ու երջանկությունը, ուստի և ազգային և հոգևոր դաստիարակությունը կոչված է հեշտացնելու ազգի գոյության պայքարը: Ահա թե ինչու է դաստարակությունը պետք երեխայի մեջ ստեղծի այն գիտակցությունը, որ նրա անհատական երջանկությունը գտնվում է ազգի հավաքական երջանկության մեջ, բոլոր դժբախտությունները բխում են ազգային ընդհանուր ձախորդություններից և դժբախտություններից: Ուստի և ազգային և հոգևոր դաստիարակության դերն է՝ երջանկացնել անհատին ազգային երջանկության մեջ»[1]:

---

[1] Կարապետյան Հր., Ազգի և ազգային դաստիարակության հիմնախնդիրները, Երևան, 1999, էջ՝ 57:

Կան երկրներ, որտեղ կրոնականի փոխարեն հոգևոր կրթությունն են կարևորում՝ համապատասխան երաժշտությամբ, գրականությամբ, բարոյագիտական նորմերով: Այլ աշխարհիկ երկրներում էլ կրոնական կրթությունը պարտադիր բայց ոչ դավանանքային ուսումնական առարկա է հանրակրթական դպրոցներում: Այդ երկրներում տարբեր կրոնների (Քրիստոնեություն, Իսլամ, Բուդդայականություն) կրոնական հասկացությունները, ծեսերը, կրոնական տոների նշանակությունների պարզաբանումները դասավանդվում են որպես գիտություն: Մեր ուսումնասիրման նպատակն է նաև պարզել, թե ինչպես է իրականացվում կրոնական-հոգևոր կրթությունը տարբեր երկրներում, համեմատություններ անել Հայաստանում իրականացվող «Հայոց եկեղեցու պատմություն» ուսումնական առարկայի հետ և այս ամենի ֆոնին առանձնացնել մեր դպրոցներում իրականացվող հոգևոր կրթության առանձնահատկությունները՝ որպես հայ հոգևոր մշակույթի գործնական փոխանցում մեր սովորողներին:

Կրոնական կրթության ազատ ընտրությամբ լինելը, ըստ սովորողների ծնողների համոզմունքների, պաշտպանված է UNESCO-ի՝ 1960թ. Փարիզում ընդունված կրթության խտրականության դեմ կոնվենցիայով[2]: Այսուհանդերձ, կրոնական կրթությունը աշխարհի տարբեր երկրներում հակասական մոտեցումներ ունի: Որոշ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Ռուսաստանը չեն ֆինանսավորում կրոնական կրթությունը հանրակրթական պետական դպրոցներում և այդ երկրների դպրոցների ուսումնական պլաններում կրոնական կրթությունն ընդգրկված չէ: Բոլորովին այլ է կրոնական կրթությունն ու դաստիարակությունը կրոնապետական երկրներում (Աֆղանստան, Պակիստան, Իրան): Այստեղ խիստ պարտադիր է կրոնական կրթության իրականացումը՝ որպես կոնկրետ մի կրոնի քարոզչություն, դավանանք, և սովորողները խիստ պատժվում են, եթե խախտում են իրենց կրոնի կանոնները (օրինակ՝ շարիաթի օրենքները իսլամում):

Դաստիարակությունը բոլոր սուրբ գործերից ամենասուրբն է: Եթե ծնողներն ու մանկավարժները երեխաների դաստիարակության և կրթության հարցում ցանկանում են լավագույն արդյունքի հասնել միայն աշխարհիկ կրթությամբ, ապա արդյունքն անխուսափելիորեն նրանց կհուսահատեցնի: Նման դաստիարակության պարագայում

[2] Convention against Discrimination in Education / https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-against-discrimination-education

ինքնանպատակ է դառնում գիտելիքների ամբարումը, եթե չի զուգահեռվում հոգու ամրապնդման հետ: Այդ դեպքում երեխայի մոտ առաջ է գալիս ինքնահավանություն, փառասիրություն, հոգևոր խլություն, նախանձ և հոգու համար այլ կործանարար մոլություններ: Ամեն գիտություն պետք է դասավանդվի քրիստոնեական տեսանկյունից և միայն այդպիսի դասավանդումը գիտելիքը կդարձնի ամբողջական և ճշմարիտ: Կրթությունն, ըստ Ս. Իոանն Կրոնշտադտացու, անբաժանելի է դաստիարակությունից: Դաստիարկությունը նրա կողմից ընդունվում է որպես սրտի դաստիարակություն: Նա գտնում է, որ անհրաժեշտ է նախ ուսանել սրտի գիտությունը, այսինքն՝ սիրո, հավատի, աղոթքի և խոնարհության գիտությունը: Նա նշում է, որ կրթելիս չափազանց վտանգավոր է զարգացնել միայն բանականությունն ու միտքը՝ ուշադրություն չդարձնելով սրտին. «Հարկավոր է մաքուր պահել այս կյանքի աղբյուրը: Հասարակությունը բարոյազրկվել է քրիստոնեական դաստիարակության պակասից: Ժամանակն է գիտակցել, որ մեր սրտի ճշմարիտ կյանքը Քրիստոսն է: Քրիստոնեական ամուր հիմքերից զուրկ հոգին կարող է ավերիչ հետևանքներ ունենալ: Հնարավոր է լինել գիտնական, բայց ավաղ ոչ պիտանի մարդ: Մենք պետք է կրթենք ոչ միայն հասարակության համար պիտանի և գիտնական անձանց, այլ բարի և Աստծո երկյուղն ունեցող քրիստոնյաների, ինչն առավել կարևոր է»[3]:

Հոգևոր կրթության տեսական հիմքերը բխում են բարոյական դաստիարակությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:

---

[3] Մանդիրյան Ս., Համառոտ մանկավարժություն, Թիֆլիս, 1878, էջ՝ 73:

• Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:

• Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ: Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ[4]:

Ուսուցչի խնդիրը պետք է լինի դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի համար մշտական սովորույթ, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա միշտ կատարի դրական արարքներ և դրա հիման վրա ձևավորի վարքի դրական կուլտուրա: Հեգելը գրում էր «Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում , երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծը»:

Ժամանակակից դասակարգմամբ բարոյական դաստիարակության խնդիրները բաժանվում են երկու խմբի.

• խնդիրներ, որոնք ուղղված են բարոյական դաստիարակության մեխանիզմի բաղադրատարրերի ձևավորմանը,

• խնդիրներ՝ ուղղված անձնային բարոյական հատկությունների ձևավորմանը:

Առաջին խմբի խնդիրները կայուն են ու անփոփոխ և նպաստում են երեխայի մեջ բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը:

Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են ու շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային որակների ձևավորման ուղղությամբ:

Եթե նախկինում հասարակությունն առավել կարևորում էր հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, աշխատասիրության և կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա հասարակության զարգացման ներկա ժամանակահատվածում շեշտադրվում են այնպիսի անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ մարդասիրությունը (բարությունը) և հանդուրժողականությունը, ձեռներեցությունը և կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը, ստեղծագործական ընդունակությունները և կրեատիվ-ստեղծարար

---

[4] Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Երևան, 2009, էջ՝ 298:

դիրքորոշումը, ինքնասիրությունն ու արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունն ու համագործակցելու կարողությունները, քաղաքացիական հատկությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ հանգեցնում է սոցիալական զգացմունքների զարգացմանն ու ձևավորմանը[5]:

Եվ, ի վերջո, բարոյականության հզոր միջոց է երեխային շրջապատող մթնոլորտը, այն սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում, սովորում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը:

Այսպիսով, հոգևոր կրթության որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում երեք կարևորագույն հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ: Նշված հատկանիշներն օգնում են կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

## Գլուխ Բ

### «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան հոգևոր կրթության համատեքստում

*«Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին Իմ աշակերտները դարձրեք: Սովորեցրե՛ք նրանց այն բոլորը պատվիրանները, որ տվեցի ձեզ» (Մատթ. 28:19)*

Հայաստանի անկախացումից հետո հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ Հայոց եկեղեցու պատմության, նրա կառույցի, դավանանքի և ընդհանրապես կրոնի ոլորտի նկատմամբ: Հանրակրթական որոշ հաստատություններում տարերայնորեն ներդրվեցին զանազան ծրագրեր (Հայ Առաքելական եկեղեցու պատմութուն, Կրոնի պատմություն, Կրոնագիտություն և այլն), որոնք ապահովված

[5] Бреслав Г. М., Эмоциональные особенности формирования личности в детстве. "Педагогика", Москва, 1990, стр. 144.

չէին որակյալ և անհրաժեշտ ծրագրերով ու դասագրքերով, դասընթացները պետականորեն չէին սպասարկվում:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակն է՝ այս ոլորտում մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակականություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն:

Այն նպատակ ունի նաև ամբողջացնել հայագիտական առարկաների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները:

Հայ ժողովուրդն ավանդաբար և պետականորեն յուրաքանչյուր տարի նշել և հիմա էլ նշում է ավելի քան երկու տասնյակ տոներ: Այս դասընթացը կօգնի սովորողին հասկանալու այդ տոների և արարողությունների ազգային-եկեղեցական, պատմական և դաստիարակչական իմաստը: Հայոց եկեղեցու պատմություն դասընթացի մշակման և այն հանրակրթական դպրոցում ներդնելու գործընթացի պրակտիկ փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կիրառված մոդելը հիմնականում համապատասխանում է առարկայի ընդհանուր նպատակներին և դաստիարակչական գործառույթների նախատեսված պահանջներին: Ըստ այդմ՝ առարկայի նպատակներն են սովորողին

- **ծանոթացնել** քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներին և դրանց հաղորդակից միջոցով նրա մեջ դաստիարակել բարություն, ընկերասիրություն, հավատարմություն, հարգանք ծնողների և ավագների նկատմամբ,
- **աջակցել** կարևորելու հոգևոր - ազգային կառույցի դերը հայոց պատմության մեջ,
- **իմանալ և հարգել** սեփական ավանդույթները, տոները,
- **ձևավորելու** աշխարհայացքային պատկերացումներ, ընդլայնելու մտահորիզոնը,
- **ձևավորելու** հայրենիքի, պետության և հասարակության առջև պարտքի գիտակցություն, սեփական արարքների նկատմամբ պատասխանատու կեցվածք,

- **հաղորդել** գիտելիքներ հայոց եկեղեցու համակարգված պատմության, ազգային գրականության հիմնական ուղղությունների վերաբերյալ,
- **հարգել** համաքաղաքացիներին և հայրենակիցներին, օգնել կարևորելու ընտանեկան և հասարակական կյանքում իրավունքների և պարտականությունների փոխկապվածության, քաղաքացիական հասարակության մեջ իրավունքների և պարտականությունների գիտակցման նշանակությունը:

Հոգևոր կրթությունը կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այս կարևորությունը գիտակցելով՝ սովորողին քրիստոնյա մեծացնելու, նաև հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար պետք է իմանալ երեխայի զարգացման առանձնահատկությունները, հաշվի առնել առաջին հերթին նրա՝

- մտածողության,
- երևակայության,
- բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկությունները[6]:

Հոգևոր կրթությունը և հավատքը չպետք է օգտագործել որպես վախի և դաստիարակության միջոց: Հոգևոր կրթությունը ոչ թե մեզ սահմանափակելու և վախեցնելու համար է, այլ մեզ հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող ուժ է: Հոգևոր կրթությունը նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու[7]: Քրիստոնեությունը նպաստել է հայ հոգևոր մշակույթի վերելքին, մայրենի լեզվի և գրականության պահպանմանն ու ծաղկմանը, ազգային ինքնագիտակցության զարթոնքին: Հայ եկեղեցին տևական ժամանակ համախմբել է պետականությունը կորցրած հայ ժողովրդին[8]: Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Դասընթացը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների՝ նյութի մատչելիության, տարիքային համապատասխանության, գիտամեթոդական բազմազանության պահանջներին համապատասխան:

**«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ուսունասիրելուց հետո հիմնական դպրոցն ավարտողը պետք է՝**

---

[6] Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը, Երևան, 1992, էջ՝ 67:
[7] http://ter-hambardzum.net/
[8] http://www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=1294

- գիտակցի Աստվածաշնչի՝ որպես քրիստոնեության Սուրբ գրքի դերն ու նշանակությունը իր և մարդկության կյանքում,
- կարևորի ընկերական փոխհարաբերություններում ընկերների հաջողությունները,
- լինի բարի, հոգատար և ընկերասեր,
- ընդունի համակեցության կանոնները,
- սիրի մերձավորներին, հայրենակիցներին,
- սիրի ազգային-հոգևոր կառույցը,
- սիրի իր հայրենիքը, ժողովրդին և իր պատմությունը,
- ունենա բարոյական նկարագիր,
- գիտակցի քրիստոնեության դերը և նշանակությունը մարդկության պատմության մեջ,
- գիտակցի մարդու՝ որպես տիեզերքի ամենասքանչելի ստեղծագործության դերը, հարգի մարդու և քաղաքացու իրավունքները, պայքարի դրանց պահպանման համար,
- ունենա արդարության, լավատեսության զգացում,
- սիրի Մայր եկեղեցին՝ նրա պատմությունը, ստեղծած արժեքները,
- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքին,
- ընդունի ժողովուրդների կրոնների գոյություն ունեցող տարբերությունները և հարգալից վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների մշակույթի հանդեպ,
- գիտակցի քրիստոնեական-բարոյական արժեքները պահպանելու կարևորությունը,
- լինի քրիստոնեական-բարոյական արժեքների կրողը,
- գիտակցի ազգային-հոգևոր կառույցի դերը և նշանակությունը իր և իր ժողովրդի կյանքում,
- գիտակցի ազգային ավանդույթներին և նորմերին հետևելու անհրաժեշտությունը,
- լինի իր նախնիների ստեղծած հոգևոր արժեքների կրողը,
- լինի հպարտ իր ժողովրդից ստացած ժառանգությամբ,
- գիտակցի անձնական, խմբային և պետական շահերի ներդաշնակեցման անհրաժեշտությունը:

**«Հայոց եկեղեցու պատմությունը»՝ որպես ինքնուրույն և չտարրալուծվող առարկա**

*«Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու»*

*(Մատթեոս 5:17)*

Ինքնության ու ազգային դիմագծի պահպանման գործում կարևորելով ժամանակին համահունչ կրթությունն ու ազգային, հոգևոր դաստիարակությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծել է. «Այս հաստատ համոզումով է դարերի հոլովույթում Հայոց Եկեղեցին կյանքի կոչել կրթադաստիարակչական իր առաքելությունը՝ բյուրեղացնելով մեր ժողովրդի հոգին, որը մշտապես բաց է եղել աշխարհի առաջ, բայց միևնույն ժամանակ կառչած իր հավատքին ու նախնյաց ավանդներին։ Նույն առաքելությանն է կոչված նաև ժամանակի փորձությունները հաղթահարած «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան, որն անկախությունից հետո կրթական ասպարեզի ամենակարևոր ձեռքբերումներից է՝ ազգօգուտ բարի պտուղը Եկեղեցի-պետություն գործակցության և հետևողական բազմամյա աշխատանքի։ Առարկայի միջոցով տրվող արժեքները բոլոր ժամանակներում եղել են մեր ժողովրդի գոյության և հարատևության հենասյունը, երբեմն աներևույթ, սակայն մշտապես ամուր և անխորտակելի պատվարը ազգային ինքնագիտակցության։

Այս առարկայի **ամբողջական** դասավանդումը հանրակրթական դպրոցներում, ազգային կրթության պարտադիր տարրի պատշաճ ապահովումը բարձրագույն կրթության մեջ պետք է դառնան ամենքիս և հատկապես՝ հայրենի պետության հոգածության առարկան, եթե կամենում ենք ունենալ իրական արժեքներով սնուցվող անկախ պետականություն, կառուցել մեր նախնիների երազած շեն ու հզոր հայրենին, որի զավակները հասակ կառնեն հոգեմտավոր մեր ժառանգության համակարգային իմացությամբ և ճանաչողությամբ։ Միմիայն այս ճանապարհով կկարողանանք պահպանել ազգային մեր դիմագիծը և երաշխավորել ազգիս երթը դեպի նոր հազարամյակներ»[9]։

[9] https://yerevan.today/all/politics/110171/%C2%ABhayoc-ekeghecou-patmoutyoun%C2%BB-ararkan-ankaxoutyounic-heto-krtakan-asparezi-amenakarevor-dzerqberoumneric-e-garegin-b

**Դասագրքերի կառուցվածքը և նպատակը.**

**5-րդ դասարանի** դասագրքի միջոցով սովորողը իմանում է, թե ինչպես է գրվել, կազմվել և մեզ հասել քրիստոնյաների Սուրբ Գիրքը՝ Աստվածաշունչ մատյանը: Ծանոթանում է աշխարհի ստեղծման, ջրհեղեղի, Բաբելոնյան աշտարակաշինության, ժողովուրդների առաջացման մասին աստվածաշնչյան պատմություններին:

Աստվածաշնչից ու այլ գրքերից ընտրվել և ներկայացվել են հետաքրքրական և հիշարժան պատմություններ: Այնուհետև տրված են հարցեր և առաջադրանքներ, որոնք օգնում են ավելի լավ հասկանալու և ամրապնդելու սովորածը: Դասի վերջում կան լրացուցիչ նյութեր, որոնք շատ ուսանելի և ուշագրավ տեղեկություններ են հաղորդում:

**6-րդ դասարանի** դասագրքի միջոցով սովորողը ճանաչողական գիտելիքներ է ձեռք բերում Հայ Առաքելական Եկեղեցու վերաբերյալ: Որոշակի պատկերացում է կազմում նրա կառույցի, արարողակարգի, խորհուրդների և տոների մասին: Միաժամանակ ծանոթանում է քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղություններին: Հետաքրքիր և մատչելի գրված պատմությունները օգնում են հասկանալու եկեղեցական բազմաթիվ հասկացությունների իմաստն ու նշանակությունը:

Դասագիրքը հարստացնում է սովորողի իմացության պաշարը Հայոց եկեղեցու վերաբերյալ, քանի որ Հայոց եկեղեցին ստեղծել, պահպանել ու մեզ է հասցրել մշակութային բազմաթիվ արժեքներ, ազգային սովորույթներ, ծեսեր և տոներ: Անժխտելի է նրա դերը հայ ժողովրդի ազգապահպանության գործում: Եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ մարդու ազգային նկարագրի անբաժանելի մասը:

**7-րդ դասարանի** դասագրքի միջոցով սովորողին ներկայացվում է հայոց հին հավատալիքների և շրջակա երկրների մինչ քրիստոնեական կրոնների, քրիստոնեության տարածման, Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն հռչակման, Հայոց եկեղեցու կառույցի ձևավորման ու ամրապնդման, պետության և եկեղեցու միջև եղած հարաբերությունների, տիեզերական ժողովների, քրիստոնեական այլ եկեղեցիների հետ Հայոց եկեղեցու հարաբերությունների պատմությունը:

Ուսումնասիրելով Հայոց եկեղեցու պատմությունը՝ սովորողը խոր հարգանքի ու հպարտության զգացումով է լցվում հարազատ եկեղեցու, ժողովրդի և հայրենիքի հանդեպ: Հայոց եկեղեցին համազգային այն կառույցն է, որ մշտապես իր ժողովրդի խորհրդատուն, ուսուցանողն ու բարոյական նեցուկն է եղել, կանգնած է եղել հայրենի

պետության կողքին: Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայոց եկեղեցին է դարձել ամբողջ հայությանը համախմբող և կազմակերպող ուժը, գիր ու գրչության, հայոց մերօրյա մշակույթի հիմնական կերտողը, հայոց անկախ պետականության ջահակիրը:

**8-րդ դասարանի** դասագրքում ներկայացվում է Հայոց եկեղեցու IX- XVIII դարերի պատմությունը, որը հարուստ է քաղաքական կարևոր իրադարձություններով, հոգևոր-մշակութային մեծ ձեռքբերումներով, ազատագրական պայքարի խիզախումներով, ցավոք, նաև կորուստներով ու վայրէջքներով:

Օտար տիրապետությունների դժվարագույն տարիներին Հայոց եկեղեցին ստանձնել է անկախ պետականությունը վերականգնելու, հայոց հոգևոր-մշակութային կյանքը զարգացնելու, մասնատված ժողովրդին համախմբելու պատասխանատվությունը: Ուսումնասիրելով Հայոց եկեղեցու պատմությունը՝ է՛լ ավելի կամրապնդվի սերը հայրենիքի և ազգային եկեղեցու նկատմամբ:

**9-րդ դասարանի** դասագրքի միջոցով սովորողին հնարավորություն է տրվում ուսումնասիրելու Հայոց եկեղեցու պատմությունը XIX դարի սկզբներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Պետականության բացակայության պայմաններում եկեղեցին շարունակել է մի կողմից ղեկավարել հայության ազգային-հոգևոր և կրթամշակութային կյանքը հայրենիքում ու գաղթավայրերում, մյուս կողմից գործուն քայլեր ձեռնարկել հայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ: Այժմ ազգային եկեղեցին շարունակում է իր առաքելությունը Մայր հայրենիքում և սփյուռքում:

Կարծում ենք «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան իր ողջ ծավալով պետք է ընդգրկված լինի պարտադիր ուսուցանվող առարկաների ցանկում, իսկ ինտեգրման արդյունքում ի չիք է դարձվում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում արձանագրված արդյունքները:

Կրթական բարեփոխումների գործընթացի իրականացման նման պայմաններում առկայծող մեր միակ հույսն այն է, որ հանրակրթության ոլորտում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի, որպես պարտադիր բաղադրիչի, ամբողջական ծավալի պահպանումով հնարավոր կլինի լրացնել այն բացը, որ ձևավորվել է ազգային ինքնության և հոգևոր դաստիարակության ոլորտում: Տեղին ենք համարում վկայակոչել

միջնադարյան բազմաշնորհ ու լայնախոհ մեր հայրերից Ներսես արք. Լամբրոնացու խիստ այժմեական պատգամը. «Ամենայն ազգ զիւր հարց աւանդութիւն պինդ կալցի»[10]:

## Եզրակացություն

Քրիստոնեությունը, որպես համաշխարհային, համամարդկային կրոն, որպես գաղափարաարժեքային համակարգ և վարդապետություն, տարածվելուց հետո դարձել է քրիստոնեական ազգերի պատմական զարգացման անկապտելի մասը, իսկ հաճախ նաև՝ հասարակական և ազգային գիտակցության առանցքն ու հենքը:

Քրիստոնեությունն առանձնահատուկ դեր է խաղացել Հայոց պատմության մեջ, ինչն անխզելիորեն կապված է Հայ առաքելական եկեղեցու հետ: Հայոց եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը: Քրիստոնեական բարոյագիտության մեջ Հայ Առաքելական եկեղեցու դերը բացառիկ է: Վիթխարի է նրա ներդրումը հայոց հոգևոր, կրթամշակութային արժեքների ձևավորման և պահպանման, հայոց պետականության ամրապնդման և զարգացման, ազգապահպանության գործում:

Նոր սերնդի հաղորդակցությունը ավանդական հոգևոր-ազգային արժեքներին իրականացվում է բոլոր քաղաքակիրթ երկրների կրթական պրակտիկայում: ՀՀ Կրթակարգի, որը ձևավորվել է հայ հասարակության կրթությանն ուղղված սոցիալական պատվերի հիման վրա, պահանջներից է, մասնավորապես, որ միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտը գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը, իմանա իր իրավունքներն ու պարտականություններնը, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի: Այս պահանջները հիմնավորում են Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման կարևորությունը և նշանակությունը արդի հանրակրթական դպրոցում:

[10] https://www.qahana.am/

Այսպիսով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը պետք է ՀՀ-ում խթանի աշակերտների պատկերացումներն ու գիտելիքները ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու, այլև այլ կրոնական կազմակերպությունների վերաբերյալ վերաբերմունք և ձևավորի համապատասխան մոտեցում բոլոր կրոնական կազմակերպությունների, նրանց ներկայացուցիչների ու սպասավորների նկատմամբ: Նման առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցում, մանավանդ, երբ հաշվի ենք առնում, որ այս առարկան իր մեջ ներառել է էթիկային ու բարոյագիտությանը վերաբերող թեմաներ, պետք է միտված լինի ոչ միայն գիտելիքների ապահովմանը, այլ նաև ուսուցիչների ջանքերով աշակերտների մեջ սերմանի հանդուրժողականության տարրեր, համակող-մանի պատկերացումներ տա այլ մշակույթների ու կրոնների նկատմամբ ու ընդհանուր իմաստով խթանի երկրում բազմախոհության, բազմակարծության և ժողովրդավարաց-ման մթնոլորտը:

Հոգևոր կրթությունը կօգնի նաև ստուգաբանել մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ հարցեր, որոնց բացատրությունը կապված է ազգային-եկեղեցական ավանդույթների հետ: Հայաստանի Հանրապետությունն ընդգրկված է համաշխարհային քաղաքակրթական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր գործընթացների մեջ, որոնց ազդցությունն ակնհայտ է մշակույթի և հոգևոր-բարոյական հարցերի բնագավառում: Առարկան կօգնի ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ:

## Գրականության ցանկ


ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Կրթության մասին ՀՀ օրենքը
2. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը
3. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2010

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ա. Սկզբնաղբյուրներ**

4. Աստվածաշունչ

**Բ. Ուսումնասիրություններ**

**Հայերեն**

6. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Երևան, 2009
7. Կարապետյան Հր., Ազգի և ազգային դաստիարակության հիմնախնդիրները, Երևան, 1999
8. Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը, Երևան, 1992
9. Մանդիրյան Ս., Համառոտ մանկավարժություն, Թիֆլիս, 1878

**Ռուսերեն**

10. Бреслав Г. М., Эмоциональные особенности формирования личности в детстве. "Педагогика", Москва, 1990

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

11. Convention against Discrimination in Education / https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-against-discrimination-education
12. http://ter-hambardzum.net/
13. http://www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=1294
15.https://yerevan.today/all/politics/110171/%C2%ABhayoc-ekeghecou-atmoutyoun%C2%BB-ararkan-ankaxoutyounic-heto-krtakan-asparezi-amenakarevor-dzerqberoumneric-e-garegin-b
16. https://www.qahana.am/